

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«---» «-----» 2018թ.

N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ՄԻԶԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածով, Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշման հավելվածի 13-րդ կետի 43-րդ ենթակետի «գ» պարբերությունով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Երևանի քաղաքապետարանի և Եվրոպական միության միջև 2017 թվականի դեկտեմբերի 27-ին ստորագրված դրամաշնորհային պայմանագիրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու **2014** թվականի սեպտեմբերի **9**-ի **N204**-Ա որոշմամբ Երևանը միացավ Եվրոպական Միության «Քաղաքապետների դաշնագիր» նախաձեռնությանը, որի շրջանակներում մշակվեց և Երևան քաղաքի ավագանու **2016** թվականի հունիսի **24**-ի **N558**-Ն որոշմամբ հաստատվեց «Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագիրը» (այսուհետ՝ **ԿԷԶԳԾ**), որի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանը պարտավորվեց էներգախնայողությանն ու էներգաարդյունավետությանն ուղղված համալիր միջոցառումների իրականացման արդյունքում մինչև **2020**թ. կանխատեսվող արտանետումների համեմատ շուրջ **21%**-ով կրճատել Երևան համայնքի ջերմոցային գազերի արտանետումները:

ԿԷԶԳԾ-ում նախանշված միջոցառումները կյանքի կոչելու նպատակով՝ Եվրոպական հանձնաժողովի «**CoM-DeP**» ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում դրամաշնորհի հայտերի մշակման հրավերի համապատասխան Երևանի քաղաքապետարանի կողմից մշակվել և ներկայացվել էր «Երևան. արևային համայնք» ծրագիրը, որը ներառում է **ԿԷԶԳԾ**-ում նախատեսված **7** միջոցառում (Միջոցառում **L.3**. Բազմաբնակարանային գոտում բակային տարածքների լուսավորության համակարգերում արևային ֆոտովոլտային սարքերի տեղադրում, Միջոցառում **H.1**. Քաղաքային էներգետիկ պլանավորում և կառավարում, Միջոցառում **H.3**. Շենքերի էներգետիկ սերտիֆիկատների մշակում, Միջոցառում **H.7**. Բյուջետային հաստատությունների, ձեռնարկությունների ու ընկերությունների մասնագետների համար սեմինարների և դասընթացների կազմակերպում, Միջոցառում **R.5**. Սոցիալապես անապահով տնային տնտեսություններին **LED** լամպերի տրամադրում, Միջոցառում **P.1** էներգետիկ կառավարման միջոցառման արդյունքները, Միջոցառում **P.5**. Շենքերում վերականգնվող էներգիայի օգտագործման արդյունքները): Մշակված ծրագիրը հաջողությամբ հաղթահարել է բոլոր փուլերը, որի արդյունքում **2017** թվականի դեկտեմբերին **27**-ին Երևանի քաղաքապետարանի և Եվրոպական միության միջև ստորագրվել է դրամաշնորհային պայմանագիր՝ «Երևան. արևային համայնք» ծրագրի իրականացման վերաբերյալ:

Ծրագրի նպատակն է նվազեցնել ջերմոցային գազերի արտանետումները և ապահովել էներգախնայողություն՝ շուրջ **90** բազմաբնակարան շենքերում էներգաարդյունավետության միջոցառումների իրականացման և տանիքներին արևային ֆոտովոլտային համակարգեր տեղադրելու միջոցով, որի արդյունքում կապահովվի տվյալ շենքերի վերելակների, ընդհանուր օգտագործման և բակային տարածքների էլեկտրաէներգիայի մատակարարումը, շքամուտքերում, ինչպես նաև բակային տարածքներում կտեղադրվեն **LED** լուսատուներ:

Ծրագիրը բաղկացած է **3** հիմնական բաղադրիչներից՝

- բազմաբնակարան շենքերում բացառապես վերականգնվող էներգիայի օգտագործմամբ էներգամատակարարման մոդելի ստեղծում՝ ընդհանուր օգտագործման և բակային տարածքների լուսավորության ապահովման և վերելակների շահագործման համար:

- քաղաքային էներգետիկ պլանավորման և կառավարման (մոնիթորինգ, հաշվետվողականություն, տեղեկատվության վերլուծություն) համակարգի ստեղծում: Մասնավորապես նախատեսվում է շենքերի պլանավորման և կառավարման գործիքի ստեղծում, շենքերում արևային ֆոտովոլտային համակարգերի տեղադրման նպատակով կրկնօրինակման ենթակա ներդրումային մոդելի ստեղծում, բազմաբնակարան շենքերի բնակիչների և համատիրությունների համար արևային ֆոտովոլտային համակարգերի տեղադրման ուղեցույցի մշակում:
- համատիրությունների, հանրային հատվածի և այլ համայնքների կարողությունների զարգացմանն աջակցության ապահովում (սեմինարների և դասընթացների միջոցով իրազեկվածության մակարդակի բարձրացում, շահագրգիռ անձանց ուղեցույցի տրամադրում, ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների էլեկտրաէներգիայի ծախսի նվազեցում):

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել **2018-2019** թվականների ընթացքում:

Ծրագրի բյուջեն **1250003.95** եվրո է, որից ԵՄ դրամաշնորհը կազմում է **1** մլն եվրո (**80%** համաֆինանսավորում), իսկ Երևանի քաղաքապետարանի համաֆինանսավորումը՝ **250003.95** եվրո (**20%** համաֆինանսավորում): Ծրագրի իրականացման արդյունքում էներգախնայողության միջոցառումներից և վերականգնվող էներգիայի կիրառումից արտանետումների կրճատումը կկազմի տարեկան **844** տոննա CO2:

Ծրագրի կառավարումն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից: Այդ նպատակով սահմանված կարգով կստեղծվի ծրագրի իրականացման աշխատանքային խումբ:

«Երևան. արևային համայնք» ծրագիրը համահունչ է Երևան քաղաքի ավագանու **12.09.2017թ. հ.21-Ն** որոշմամբ հաստատված Երևան քաղաքի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրին, ՀՀ էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագրին (ընդունված՝ **2007թ.**), Հայաստանի առաջին էներգաարդյունավետության գործողությունների ազգային պլանին (ընդունված՝ **2010թ.**), Հայաստանի երկրորդ էներգաարդյունավետության գործողությունների ազգային պլանին:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության **2017** թվականի դեկտեմբերի **28-ի N04/5-2/24673-17**, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության **2017** թվականի դեկտեմբերի **25-ի N01/17.1/23305.17**, Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության **2018** թվականի հունվարի **11-ի N03/21.1/50.18**, Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի **2018** թվականի հունվարի **10-ի 15.3-05/000006-18** գրությունները՝ Երևանի քաղաքի ավագանու հաստատմանն է ներկայացվում Երևանի քաղաքապետարանի և Եվրոպական Միության միջև ստորագրված դրամաշնորհային պայամանագիրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

S. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի քաղաքապետարանի և Եվրոպական միության միջև դրամաշնորհային պայմանագիրը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևանի քաղաքապետարանի և Եվրոպական միության միջև դրամաշնորհային պայմանագիրը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ փոփոխություններ կնախատեսվեն Երևանի բյուջեներում՝ ըստ տարիների:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ